

---

---

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ  
ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ**

**ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՅՈՒ. Գ.**

*Սոցիալ-տնտեսական կարգավիճակը բազմաչափ սոցիալական երևույթ է: Հարցվողի նյութական բարեկեցության մակարդակի որոշումը սոցիոլոգիայի արդի հիմնահանդիսներից է: Առաջին հայացքից բավական պարզ թվացող այս խնդիրը բազմաթիվ հարցեր է առաջացնում: Դրանք վերաբերում են ինչպես հարցման ընթացակարգին, այնպես էլ ստացված արդյունքների բովանդակային վերլուծությանը: Քանի որ սոցիալ-տնտեսական կարգավիճակը չափելիս առնչվում ենք բազմազործոն սոցիալական օբյեկտի հետ, հարկ է հստակ պատկերացնել չափվող սոցիալական երևույթի կառուցվածքը:*

*Սոցիալ-տնտեսական կարգավիճակի բաղադրիչները քննելիս առաջին հերթին ուրվագծվում են օբյեկտիվ և սուբյեկտիվ գնահատականի հնարավորությունները: Բնականաբար, օբյեկտիվ և սուբյեկտիվ գնահատականները շատ հաճախ չեն համընկնում, իսկ երբեմն կարող են անգամ հակասական բովանդակություն ունենալ: Այդուհանդերձ, սուբյեկտիվ գնահատականներն ունեն որոշակի սոցիալ-հոգեբանական հիմնավորում և սոցիալ-տնտեսական կարգավիճակի չափման պարագայում շատ կարևոր դեր են խաղում:*

*Սուբյեկտիվ գնահատականը հիմնվում է այն մոտեցման վրա, որ մարդկանց կարծիքն իրենց սոցիալ-տնտեսական վիճակի մասին պետք է դիտարկվի որպես որոշիչ հանգամանք, քանզի մարդն իր սոցիալական միջավայրի փորձագետն է: Իսկ սոցիոլոգիական չափման մեթոդների օգնությամբ ամրագրված սուբյեկտիվ գնահատականներն առավել իրատեսական են և ընկալվում են որպես սոցիալական իրականության համալիր արտացոլում:*

*Սուբյեկտիվ գնահատականը անձի ինքնագիտակցության բաղադրիչ է, որը կապված է սուբյեկտի ապրումների, սուբյեկտի կողմից սեփական ֆիզիկական ուժի, մտավոր ունակությունների, արարքների, վարքի դրդապատճառների ու նպատակների, շրջապատող մարդկանց հանդեպ վերաբերմունքի գնահատականի հետ: Սուբյեկտիվ գնահատականի ձևավորման ուսումնասիրությունը կատարվում է հոգեբանական տեսության շրջանակում: Այստեղ անդրադարձ է կատարվում միջանձնային շփման, ինքնագնահատականի, անձի սուբյեկտիվ ընկալման և ինքնակառավարման, անձնային որակների և հնարավորությունների, սեփական «Ես»-ի կառուցման, ինքնարնկալման, ինքնագիտակցության և*

---

<sup>1</sup> Социальная работа: теория и практика, под ред. Арутюнян Л. А., Е., 1995, с. 67.

ինքնաներկայացման խնդիրներին<sup>2</sup>:

Սոցիոլոգիան, որը հիմնվում է էմպիրիկ տվյալների վրա, բնականաբար, հաճախ անդրադառնում է սուբյեկտիվ գնահատականներին: Մակայն ի տարբերություն հոգեբանական մոտեցումների, սոցիոլոգիայում չի դիտարկվում այդ գնահատականների կապը հարցվողների անձնային որակների հետ: Սոցիոլոգի համար կարևոր են հարցվողների սուբյեկտիվ կարծիքի ձևավորման և փոփոխման օրինաչափությունները և այդ գնահատականների կապը այս կամ այն սոցիալական, մասնագիտական և այլ խմբերին իրենց պատկանելությունը բնորոշող ցուցիչների հետ: Առավել հաճախ սուբյեկտիվ գնահատականներն օգտագործվում են, երբ սոցիոլոգը բարդ սոցիալական օբյեկտների գործառնության վերաբերյալ թաքնված կամ բացահայտ տվյալների ստացման խնդիր ունի:

Սուբյեկտիվ գնահատականների առանձնահատկությունները և կիրառման անհրաժեշտությունը հիմնվում են հետևյալ ենթադրությունների վրա.

- Սուբյեկտիվ գնահատականը մարդու գիտակցության մեջ օբյեկտիվ գործընթացների և երևույթների արտացոլման արդյունք է:

- Կյանքի ընթացքում անհատը փորձ է ձեռք բերում հասկացությունների, պատկերացումների, կարծիքների, դիրքորոշումների, կարծրատիպերի և գիտելիքների տեսքով, որոնց հիման վրա ձևավորվում է մարդու տեսադաշտում գտնվող տարբեր երևույթների և գործընթացների գնահատականը:

- Յուրաքանչյուր անհատ շրջապատող իրականության վերաբերյալ իր հոգեբանական կերպարի հիման վրա ձևավորում է օբյեկտիվ ընկալում, որում դիրքորոշումները, կարծրատիպերը և գիտելիքները սուբյեկտիվորեն սահմանվում են նմանության և տարբերության զուգադրական ընկալման սկզբունքից ելնելով:

- Սուբյեկտիվ գնահատման ժամանակ անհատն օգտագործում է տարբեր չափորոշիչներ՝ տվյալ սոցիալական երևույթը կամ գործընթացը բնորոշող հատկանիշների ամբողջություն:

- Որոշակի օբյեկտին սուբյեկտի կողմից տրվող գնահատականը ինտեգրատիվ հայտանիշ է, որը հաճախ չի ենթարկվում բառացի մեկնաբանման: Հետազոտողը խնդիր ունի բացահայտելու այն հիմնական չափորոշիչները, որոնց հիման վրա հարցվողները կառուցում են իրենց գնահատականները:

Նման մոտեցումը բացառում է հետազոտողի կարծիքների և դիրքորոշումների հնարավոր ազդեցությունը պատասխանների վրա:

Սուբյեկտիվ գնահատականների օգտագործումը սոցիոլոգիական, մասնավորապես սոցիալ-տնտեսական կարգավիճակի չափմանն ուղղված հետազոտություններում անհրաժեշտ է, քանի որ հնարավորություն է տալիս ստանալու օբյեկտիվ (հետազոտողի ազդեցությունը բացառող), բազմակողմանի

<sup>2</sup> Косова Л. Б., Кларк Т. Субъективные оценки экономического благополучия и поддержка реформ, 1998. (<http://www.ecsocman.edu.ru/data/654/695/1217/006.KOSSOVA.pdf>)

տեղեկություններ: Մյուս կողմից, զանգվածային հարցումների շրջանակում սուբյեկտիվ գնահատականների օգտագործումը թույլ է տալիս վերլուծել էմպիրիկ տեղեկատվությունը՝ մաթեմատիկական ապարատի՝ գործոնային, պարսային (կլաստերային) և ռեգրեսիոն վերլուծության կիրառությամբ:

Սուբյեկտիվ գնահատականների կիրառումը հնարավորություն է ընձեռում բացահայտելու այն բնութագրիչները, որոնցով առաջնորդվում են հարցվողները որոշակի օբյեկտներ գնահատելիս, նաև տարբերակելու և խմբավորելու այդ մարդկանց՝ ըստ սուբյեկտիվ ընկալման նմանության<sup>3</sup>:

Սոցիալ-տնտեսական հետազոտությունները նպատակ ունեն չափելու օբյեկտիվ իրականությունը: Այս պարագայում սուբյեկտիվ ընկալումը դառնում է անկախ փոփոխական, իսկ իրականության վերաբերյալ նոր գիտելիքը դիտարկվում է որպես այդ իրականության գործառնության ածանցյալ: Ընդ որում, սոցիալ-տնտեսական հետազոտությունների պարագայում տեղեկատվության ստացման մեթոդներն առավել ճշգրիտ են, դիտարկման օբյեկտը ավելի հստակ է նկարագրվում:

Ի՞նչ նկատի ունեն հարցվողներն իրենց բարեկեցությունը գնահատելիս: Ի՞նչ գործոնների հիման վրա են նրանք իրենց նույնականացնում այս կամ այն սոցիալական խմբի կամ խավի հետ: Ինչպե՞ս են հարցվողները հաշվարկում հանրագումարային կամ միջին եկամուտը: Պարզ է, որ յուրաքանչյուր սոցիալական խումբ պատշաճ, բարեկեցիկ կենսամակարդակի մասին ունի իր ուրույն պատկերացումները: Հասարակության շերտավորումը, ըստ եկամուտների, բավական երկար պատմություն ունի, և կան մշակված մոդելներ, որոնք մեկնաբանում են հարցվողների կողմից իրենց եկամուտների մակարդակի գնահատականը<sup>4</sup>:

Լ. Ֆեստինգերի իմացական անհամապատասխանության (կոգնիտիվ դիսոնանսի) տեսության համաձայն, անհատը, իրեն նույնականացնելով որոշակի սոցիալական խմբի հետ, ձգտում է տվյալ խմբի պահանջներին համապատասխանեցնել իր արժեքների և նորմերի համակարգը, ինչը նվազեցնում է դիսոնանսը և խմբային պատկանելության զգացում է առաջացնում<sup>5</sup>: Այսինքն, հարցվողները նշում են իրենց խմբին համապատասխան եկամուտների մակարդակը: Սա նշանակում է, որ հարցվողը կարող է նշել իրականից ավելի բարձր եկամուտների մակարդակ՝ ցանկանալով առանձնանալ, հեռանալ իր համար անցանկալի թվացող սոցիալական խմբից: Հնարավոր է նաև, որ հարցվողը, իր ընտանիքը մանկավարժների ընտանիք համարելով, չնշի գյուղատնտեսական

<sup>3</sup> **Хахулина Л.** Субъективные оценки социального неравенства: результаты сравнительного международного исследования (Вестник общественного мнения, 2004, N 3, с. 45-51).

<sup>4</sup> **Coulter F., Cowell F., Jenckins S.** Equivalence Scale Relatives and the Extent of Inequality and Poverty (The Economic Journal, 1992, Vol. 107, p. 1067-1082).

<sup>5</sup> **Фестингер Л.** Теория когнитивного диссонанса, пер. с англ. А. Анистратенко, И. Знашеевой, СПб., 1999.

գործունեությունից ստացվող եկամուտները: Այս ենթադրությունը հակասում է շատ սոցիոլոգների այն կարծիքին, որ հարցվողները նվազեցնում են իրենց եկամուտները՝ խմբի բարեկեցության մակարդակին ուղիղ համեմատական: Եկամուտների բաշխման մոդալների՝ տարատեսակները վկայում են այն մասին, թե որքան շատ են ու տարբեր «պատշաճ» եկամտի մասին հարցվողների պատկերացումները<sup>6</sup>: Տվյալ բաշխման համաձայն՝ որոշվում է հարցվողների խմբերի թիվը, որը և շերտավորման հիմք է դառնում:

Հարցումների ընթացքում խնդիրներ են առաջանում ինչպես սանդղակի կառուցման ժամանակ, այնպես էլ սանդղակին համապատասխան՝ հարցվողի կողմից իր դիրքը որոշելու ընթացքում: Երբ հարցվողն ինքն է որոշում իր դիրքը բարեկեցության սանդղակի վրա, մենք գործ ունենք սուբյեկտիվ սանդղակի հետ: Վերջինը բաղկացած է լինում կենտ թվով մակարդակներից, ընդ որում, հարցվողների մեծ մասը մտնում է միջին դիրքում գտնվող խմբի մեջ: Առավել հարմարավետ սանդղակը բաղկացած է հինգ մակարդակից՝ հնգաստիճան բաշխման հետ համապատասխանությամբ: Երբեմն օգտագործվում է նաև տասնաստիճան սանդղակ, որը, մի կողմից, սոցիալական շերտավորման առավել ճշգրիտ չափման հնարավորություն է տալիս, մյուս կողմից, կարող է անհրաժեշտության դեպքում վերափոխվել հնգաստիճան սանդղակի:

Անշուշտ, բարեկեցության մակարդակի սուբյեկտիվ գնահատականների վրա կարող են ազդել նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են սեռը, տարիքը, քաղաքական ակտիվությունը, արժեքային կողմնորոշումները և այլն:

Երևանում 2011 թ. հունվարին իրականացվել է զանգվածային հարցում, որը պարունակում էր սուբյեկտիվ գնահատման հնգաստիճան սանդղակ: Հարցը ձևակերպված էր հետևյալ կերպ.

Դուք Ձեզ համարում եք՝

1. հարուստ,
2. միջին խավից բարձր, բայց ոչ հարուստ,
3. միջին խավի ներկայացուցիչ,
4. միջին խավից ցածր, բայց ոչ աղքատ,
5. աղքատ:

Այս հարցի պատասխանները բաշխվեցին հետևյալ կերպ՝ իրենց միջին խավի ներկայացուցիչ են համարում Երևանի բնակիչների 62.9%-ը, միջին խավից բարձր, բայց ոչ հարուստ խավի ներկայացուցիչ՝ հարցվածների 4.5%-ը, միջին խավից

\* Մոդա - փոփոխականների բաշխման կենտրոնի վիճակագրական ցուցիչ: Մոդան առկա է բոլոր տեսակի սանդղակներ կիրառելիս (նումինալ, կարգային, միջակայքային):

<sup>6</sup> Градосельская Г. В. Субъективные и объективные оценки благосостояния, <http://www.socjournal.ru/article/560>

ցածր, բայց ոչ աղքատ՝ 15.3%-ը: Իրենց հարուստ են համարում հարցվածների 1.1%-ը, իսկ աղքատ՝ 15.8%-ը:

Աղյուսակ 1

Երևանի բնակիչների բարեկեցության սուբյեկտիվ գնահատականը

Պատասխաններ	%
Հարուստ	1.1
Միջին խավից բարձր, բայց ոչ հարուստ	4.5
Միջին խավի ներկայացուցիչ	62.9
Միջին խավից ցածր, բայց ոչ աղքատ	15.3
Աղքատ	15.8
Դժվարանում եմ պատասխանել	0.4
Ընդամենը	100.0

*Բնականաբար, հարցվողները բարեկեցությունն առաջին հերթին կապում են եկամուտների մակարդակի հետ: Համարվում է, որ նրանք, ովքեր չեն նշում եկամտի չափը, հակված են նվազեցնելու իրենց բարեկեցության մակարդակը, բայց էմպիրիկ տվյալները նման օրինաչափություն չեն հաստատում:*

*Հետաքրքիր և հուսադրող են հետևյալ աղյուսակում ներկայացված տվյալները: Բարձրագույն կրթությամբ հարցվողների մեջ հարուստների սոցիալական խմբի հետ իրենց նույնականացնողների տոկոսն ավելի բարձր է, քան մյուս խմբերում (1.5%), իսկ աղքատների հետ նույնականացնողների տոկոսը գրեթե երկու անգամ ցածր է (10.7%):*

Աղյուսակ 2

Երևանի բնակիչների բարեկեցության սուբյեկտիվ գնահատականը (պատասխանների բաշխումը՝ ըստ հարցվողների կրթական մակարդակի)

Պատասխաններ	Միջնակարգ	Միջնակարգ-մասնագիտական	Բարձրագույն	Ընդամենը
Հարուստ	0.9%	0.0%	1.5%	1.1%
Միջին խավից բարձր, բայց ոչ հարուստ	2.1%	2.5%	6.0%	4.5%
Միջին խավի ներկայացուցիչ	52.0%	56.0%	69.7%	62.9%
Միջին խավից ցածր, բայց ոչ աղքատ	20.7%	20.8%	11.5%	15.3%
Աղքատ	24.3%	20.8%	10.7%	15.8%
Դժվարանում եմ պատասխանել	0.0%	0.0%	0.5%	0.4%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%

*Նույն օրինաչափությունն է նկատվում նաև աշխատող և աշխատանք չունեցող հարցվողների զանգվածների համեմատության դեպքում: Հարուստների և միջին խավի ներկայացուցիչների տոկոսն աշխատող հարցվողների զանգվածում ավելի*



*Տրամաբանական է, որ իրենց աղքատ համարողների տոկոսն աճում է տարիքին համընթաց. եթե 18-29 տարիքային խմբում իրենց բարեկեցության մակարդակը որպես աղքատ գնահատողները կազմում են 5.8%, ապա 60 և ավելի տարիքային խմբում այն աճում է գրեթե վեցապատիկ՝ կազմելով 33.5%:*

*Տարբեր սեռի հարցվողների սուբյեկտիվ գնահատականներն արտացոլում են երևանյան հասարակության մեջ առկա գենդերային էական տարբերությունները: Իրենց բարեկեցությունը հարուստ և միջին խավից բարձր գնահատողների խմբում գերակշռում են արական սեռի հարցվողները, այնինչ իրենց միջին և աղքատ խավերին դասողների մեջ գերիշխում են կանայք: Իսկ միջին խավից ցածր, բայց ոչ աղքատ հարցվողների խմբում ավելի շատ են տղամարդիկ:*

Աղյուսակ 5

Երևանի բնակիչների բարեկեցության սուբյեկտիվ գնահատականը (պատասխանների բաշխում՝ ըստ հարցվողների սեռի)

<b>Պատասխաններ</b>	<b>Արական</b>	<b>Իգական</b>	<b>Ընդամենը</b>
Հարուստ	1.4%	0.6%	1.1%
Միջին խավից բարձր, բայց ոչ հարուստ	5.6%	3.5%	4.5%
Միջին խավի ներկայացուցիչ	58.8%	66.6%	62.9%
Միջին խավից ցածր, բայց ոչ աղքատ	18.3%	12.7%	15.3%
Աղքատ	15.6%	16.1%	15.8%
Դժվարանում եմ պատասխանել	0.3%	0.5%	0.4%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%

*Ինչպես վկայում են սոցիալ-տնտեսական կարգավիճակի սուբյեկտիվ գնահատականների վրա հիմնված էմպիրիկ տվյալները, մեր հասարակության շերտավորման ձևավորման առումով ազդեցիկ են (ինչպես և զարգացած տնտեսությամբ սոցիալական պետությունների մեծամասնությունում) կրթության և զբաղվածության գործոնները: Ի տարբերություն վերջիններիս, Երևանի հասարակության շերտավորման վրա ազդող կարևոր գործոններից են նաև սեռը և տարիքը: Սա վկայում է ավանդական խտրական վերաբերմունքի պահպանման մասին: Եթե իգական սեռի ներկայացուցիչների սոցիալ-տնտեսական կարգավիճակը հավասարակշռվում է ընտանեկան պատկանելության և ընտանեկան ընդհանրական բյուջեի շնորհիվ, ապա տարեցների սոցիալ-տնտեսական կարգավիճակի սուբյեկտիվ ցածր գնահատականը մտածելու տեղիք է տալիս:*

**МЕХАНИЗМЫ КОНСТРУИРОВАНИЯ СУБЪЕКТИВНЫХ  
ОЦЕНОК УРОВНЯ БЛАГОСОСТОЯНИЯ НАСЕЛЕНИЯ**

МЕЛКУМЯН Ю. Г.

**Резюме**

При обсуждении составляющих социально-экономического статуса в первую очередь выделяются возможности объективных и субъективных оценок. Субъективная оценка

исходит из предположения о том, что мнение людей о своем социально-экономическом положении должно быть решающим, поскольку человек является экспертом своей социальной среды. Чаще всего субъективные оценки используются, когда перед социологом стоит задача получения скрытых или явных данных о функционировании социальных объектов.

В рамках проведенного в 2011 году в Ереване социологического исследования, направленного на измерение уровня социального благосостояния населения, была использована шкала субъективных оценок. Ответы распределились следующим образом: представителями среднего слоя себя считают 62.9% жителей Еревана; выше среднего, но не богатыми – 4.5% опрошенных; ниже среднего слоя, но не бедными – 15.3%. Богатыми себя назвали 1.1% опрошенных, а бедными – 15.8%.

Как свидетельствуют эмпирические данные, основанные на субъективных оценках благосостояния, образование и занятость являются значимыми факторами формирования стратификационной структуры нашего общества. Наряду с этим было выявлено, что пол и возраст также влияют на формирование стратификационной структуры общества города Еревана.